ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վարդենիս **25/06/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 22 անդամներ:

Բացակա էին՝ Մելանյա Եփրեմյանը, Արտակ Մանուկյանը, Վարդան Մարգարյանը, Արամ Մելքոնյանը, Սեվակ Սիմոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ահարոն Խաչատրյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զարոյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի դրույթներով՝ հիմք ընդունելով <<Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության>> բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ համայնքի ավագանին որոշում է.

Վարդենիս համայնքի բյուջեի սոցիալական ծախսերից 4729 հոդվածից տրամադրել դրամական աջակցություն Վարդենիս համայնքի անապահով բնակիչներ՝

1. Հակոբ Հակոբյան /Սոթք/ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

2. Ռայա Օսիպյան /Սոթք/30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

3. Ռոզա Դաշյան /Մեծ Մասրիկ/ 40000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ

4. Գևորգ Մելքոնյան /Նորակերտ/ 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ

5. Կամելա Մելքումյան /Կութ/ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ

6. Աշոտ Բաղալյան /Կարճաղբյուր/ 40000 /քառասուն հազար/ՀՀ դրամ

7. Արամիկ Բարսեղյան /Ծովակ/ 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ

8. Մասիս Սարոյան /Ծովակ/ 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ

9. Թևոս Ղազարյան /Կարճաղբյուր/ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ

10. Գոհար Ղազարյան/Վարդենիս/ 50000 /հիսուն հազար/ՀՀ դրամ

11. Ալբերտ Հովհաննիսյան /Վարդենիս/ 30000 /երեսուն հազար/ՀՀ դրամ

12. Մամիկոն Գրիգորյան/Վարդենիս/ 30000 /երեսուն հազար/ՀՀ դրամ

13. Նունե Մովսիսյան/Ստեփանակերտ/ 45000 /քառասունհինգ հազար/ՀՀ դրամ

14.Աննա Սահակյան /Գեղամասար/50000 /հիսուն հազար/ՀՀ դրամ

15.Ալխաս Շահինյան/Տորֆավան/ 70000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ

16.Ատոմ Ալեյան/Վարդենիս/ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ

17.Հարություն Ղազարյան/Վարդենիս/ 70000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ դիմումները չափից շատ են և ավագանու քննարկմանն են ներկայացվում միայն խիստ անապահովներինը, մնացածինը բավարարվում են հնարավոր այլ օգնություններով: Համայնքի ղեկավարը առաջարկեց հաստատել հարցը համաձայն ցանկում ներկայացված թվերի, որոնց դիմումները ուսումնասիրվել են համապատասխան հանձնաժողովի կողմից: Սոցիալական աջակցություն տրամադրելու մասին հարցը դրվեց քվեարկության: Քվեարկության արդյունքում 20 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԲԱՐԻՍ ՀՈՎՀԱՆԵՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է

1. Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրի բնակիչ Բարիս Հովհանեսյանին պատկանող անշարժ գույքի գույքահարկի մասով կուտակված 249130/երկու հարյուր քառասունինը հազար հարյուր երեսուն/ ՀՀ դրամ ապառքից

գումարը օրենքով սահմանված կարգով զիջել 101406 /մեկ հարյուր մեկ հազար չորս հարյուր վեց/ ՀՀ դրամ տույժը՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը առաջարկելով՝ Բարիս Հովհաննեսյանին պատկանող անշարժ գույքի գույքահարկի մասով կուտակված 249130/երկու հարյուր քառասունինը հազար հարյուր երեսուն/ ՀՀ դրամ ապառքից գումարը օրենքով սահմանված կարգով զիջել 101406 /մեկ հարյուր մեկ հազար չորս հարյուր վեց/ ՀՀ դրամ տույժը՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 20 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՄԱԿԻՉ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է

1. Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրի բնակիչ Մակիչ Աղաջանյանին պատկանող անշարժ գույքի գույքահարկի մասով կուտակված 197532/հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 58973 /հիսունութ հազար ինը հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամ տույժը՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը առաջարկելով՝ Մակիչ Աղաջանյանին պատկանող անշարժ գույքի գույքահարկի մասով կուտակված 197532/հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 58973 /հիսունութ հազար ինը հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամ տույժը՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 20 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ MERCEDES-BENZ 320 E ՄԱԿՆԻՇԻ 85DA500

ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի բնակիչ Բագրատ Վարդանյանին պատկանող **MERCEDES-BENZ 320 E** ՄԱԿՆԻՇԻ 85DA500 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 976053/ինը հարյուր յոթանասունվեց հազար հիսուներեք/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 242353 /երկու հարյուր քառասուներկու հազար երեք հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ տույժը և մայր գումարից 20 % /քսան տոկոս/՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը առաջարկելով՝ Բագրատ Վարդանյանին պատկանող MERCEDES-BENZ 320 E ՄԱԿՆԻՇԻ 85DA500 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 976053/ինը հարյուր յոթանասունվեց հազար հիսուներեք/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 242353 /երկու հարյուր քառասուներկու հազար երեք հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ տույժը և մայր գումարից 20 % /քսան տոկոս/՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 20 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԵՖՐՈՍԻՆՅԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ LEXUS GX 470 ՄԱԿՆԻՇԻ 15TG888 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի բնակիչ Եֆրոսինյա Սողոմոնյանին պատկանող **LEXUS GX 470** ՄԱԿՆԻՇԻ 15TG888 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 772282 /յոթ հարյուր յոթանասներկու հազար երկու հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 120282 /մեկ հարյուր քսան հազար երկու հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ տույժը և մայր գումարից 10 % /տասը տոկոս/՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը առաջարկելով՝ Եֆրոսինյա Սողոմոնյանին պատկանող LEXUS GX 470 ՄԱԿՆԻՇԻ 15TG888 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի 772282 /յոթ հարյուր յոթանասներկու հազար երկու հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ ապառքից օրենքով սահմանված կարգով զիջել 120282 /մեկ հարյուր քսան հազար երկու հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ տույժը և մայր գումարից 10 % /տասը տոկոս/՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 20 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ Վարդենիս համայնքի ավագանին որոշում է.

1.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի 1-ին փողոց 10-րդ փակուղի 1/1 հասցեի (ծածկագիր 05-051-0007-0006, սեփականության իրավունքի վկայական 10042024-05-0067) 0.06034հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը օտարել աճուրդ վաճառքի միջոցով:

2. Մեկնարկային գինը սահմանել 1քմ-ի համար 514,8 (հինգ հարյուր տասչորս ամբողջ ութ) ՀՀ դրամ (16-րդ գոտի):

Համանյքի ղեկավարը նշեց, որ խոսքը վերաբերվում է Ծովակ բնակավայրում համայնքային սեփականություն հանդիսացող 05-051-0007-0006 ծածկագրով հողամասին:
Ուստի առաջարկում ենք տալ Ձեր համաձայնությունը՝ նշված հողամասը օտարելու համար՝ մեկնարկային գին սահմանելով գործող կադաստրային արժեքով՝ 514.8 ՀՀ դրամ:

Նշված հողամասի օտարումը կնպաստի նաև բյուջեի պլանավորած կատարողականի ապահովմանը:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 20 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՎԱԿԻՄ ԼԵՆՔԱՐԻ

ՍԻՐԵԿԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 05-083-0106-0025 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.25ՀԱ <<ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ>>ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ <<ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ>> ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության կառավարության>> 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն,որոշման 13-րդ և 49-րդ կետերի
պահանջներով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1 8-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված <<ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի>>2024 թվականի մայիսի 14-ի թիվ 172 եզրակացությունը, Հովակիմ Լենքարի Սիրեկանյանի
դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանևան բնակավայրի վարչական սահմաններում ընգրկված Հովակիմ Լենքարի Սիրեկանյանի սեփականություն հանդիսացող (Սեփականության իրավունքի վկայականներ N12092022-05-0012) 0.25 հա <<գյուղատնտեսական նշանակության>> այլ հողատեսքի նշանակությունը փոփոխել <<Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվաքների օբյեկտների>> էներգետիկայի նշանակության՝ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը նշելով, որ խոսքը վերաբերվում է Հովակին Լենքարի Սիրեկանյանին պատկանող Վանեվան բնակավայրում գտնվող 0,25 հա հողամասի նշանակությունը <<Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվաքների օբյեկտների>> էներգետիկայի նշանակությունը փոփոխելուն՝ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու համար:

Ինչպես նաև հավելեմ, որ ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ստացել է թիվ 172 դրական եզրակացությունը, և առաջարկում եմ տալ Ձեր համաձայնությունը՝ տվյալ փոփոխությունն իրականացնելու համար:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 20 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ա/

Լսեցին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-092-0013-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.2ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 10/04/2024 թվականի N 02//3085-2024 - գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող 05-092-0013-0018 ծածկագրով 1.2հա հողամասը (սեփականության իրավունքի վկայական N 18062024-05-0076) նվիրաբերել՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ՝ ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԸ ԿԱՌՈՒՑՎՈՂ, ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՂ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ 300 ԴՊՐՈՑՆԵՐ»-Ի ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ՝ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> թիվ 2093-Ն որոշման համաձայն կրթահամալիր կառուցելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը հայտնեց, որ ինչպես գիտենք ՀՀ Կառավարության 2093 Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է կրթահամալիրների կառուցման ծրագիր և մեր համայնքը անմասն չի մնացել նշված ծրագրից:

Վարդենիս համայնքում իրականացվելու է թվով 5 կրթահամալիրների կառուցում:

Ներկայումս խոսքը վերաբերվում է Փոքր Մասրիկ բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող 1,2 հա հողամասին, որն անհրաժեշտ է նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ կրթահամալիր կառուցելու համար:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Ընդմիջումից հետո դահլիճ չի վերադարձել և մանցած հարցերի քննարկմանը չի մասնակցել ավագանու անդամ Մուշեղ Շաբոյանը:

Քվեարկության արդյունքում 20 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Խ.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 15/1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>

ՀՈԱԿ-Ի տնօրենի ժ/պ Իրինա Պետրոսյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Խ.Ստեփանյան փողոց 15/1 հասցեի 05-005-0087-0011 ծածկագրով 0.128 հա հողամասը, 05-005-0087-0011-001-000 ծածկագրով 713.5քմ, շինությունը անհատույց և անժամկետ օգտագործման տրամադրել <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-ԻՆ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ խոսքը վերաբերվում է <<Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկական երաժշտական դպրոց>>-ի շենքին:

Քանի որ նշված շենքի առաջին հարկում նախկինում եղել է մանկապարտեզ, որն այժմ չի գործում, և ինչպես գիտենք, Բանավան թաղամասում շահագործման կհանձնվի նոր կառուցվող մանկապարտեզ, և նշված շենքը նախկինում անհատույց տրամադրված չի եղել, ուստի առաջարկում եմ 713.5քմ շինությունը և 0.128 հա սպասարկման հողամասը անհատույց և անժամկետ օգտագործման տրամադրել թիվ 2 ՄԵԴ-ին:

Ելույթ ունեցավ ավագանու անդամ Նաիրա Մանուչարյանը՝ նշելով, որ իրենց են դիմել և հայտնել են, որ դպրոցի կտուրը կաթում է և պատուհանները գտնվում են անմխիթար վիճակում, որին ի պատասխան համայնքի ղեկավարը նշեց, որ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ և դիմել են համապատասխան մարմիններին նշված աշխատանքները իրականացնելու համար:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Հարցի քննարկման ժամանակ դահլիճից դուրս եկավ Դավիթ Շահնազարյանը և չմասնակցեց հարցի քննարկմանը

Քվեարկության արդյունքում 21 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Համայնքի ղեկավարը հայտարարեց 15 րոպե ընդմիջում:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79-Ա/

Լսեցին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-051-0034-0017 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.14513ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 23.02.2024 թվականի N 02//1590-2024 գրությունը՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող 05-051-0034-0017 ծածկագրով 0.14513հա հողամասը (սեփականության իրավունքի վկայական N 06062024-05-0009)

նվիրաբերել՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ՝ հողամասում առկա 332.4քմ մակերեսով Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող շինությունը սպասարկելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ խոսքը վերաբերում է Ծովակ բնակավայրի <<Առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՊՈԱԿ-ի (անբուլատորիայի) 0,14513 հա հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելուն՝ <<ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի հետագա աշխատանքները ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Հիմք ընդունելով՝ ՀՀ Կառավարության հունվարի 26-ի N346-Ն, 2020 թվականի հունիսի 25-ի N1079-Ն,2023 թվականի օգոստոսի 3-ի N1294-Ն որոշումները և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի համապատասխան գրությունը, առաջարկում եմ տալ Ձեր թույլտվությունը՝ նշված հողամասը նվիրաբերելու Հայաստանի Հանրապետությանը:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2024Թ.-Ի ''ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 28-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

Վարդենիս համայնքի ավագանու 2024թ. փետրվարի 6-ի <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 6-Ա որոշման մեջ կատարել լրացում՝

1.Հաստատել «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի «Բանավան» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը բաղկացած 14 հաստիքային միավորից:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ խոսքը վերաբերվում է <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի <<Բանավան>> մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հաստիքացուցակին և ինչպես արդեն նշեցի ՝ մանկապարտեզի աշխատանքները նախապես կազմակերպելու նպատակով, օրենքով սահմանված կարգով և ստանդարտներին համապատասխան կազմվել է հասատիքացուցակ՝ բաղկացած 14 հաստիքային միավորից, որը նախապես

տրամադրվել է Ձեզ՝ ուսումնասիրելու, և ինչպես գիտենք մանկապարտեզը ունենալու է երկու խումբ, և առաջարկում եմ հաստատել նշված հաստիքային միավորներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Նաիրա Մանուչարյանը աշխատավարձերի հետ կապված, եթե աշխատում են մինչև ժամը 5-ը արդյո՞ք քիչ չեն աշխատավարձները, որին ի պատասխան Կարեն Մկրտչյանը պատասխանեց, որ կա նախարարի կողմից հաստատված հաստիքացուցակ և մեթոդական ուղեցույց թե հաստիքային միավորները ինչ չափի պետք է լինեն և մենք առաջնորդվել ենք դրանով, հետագայում բյուջի միջոցների առկայության դեպքում ավագանին կարող է որոշել բարձրացնել:

Այլ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ և 2-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1.<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 5-Ա ՈՐՈՇՄԱՆ մեջ կատարել փոփոխություն՝ <<Անասնաբույժ>> հաստիքային միավորները առանձնացնել քաղաքացիական աշխատանք իրականցնող անձնակազմ ենթավերնագրով և 54-րդ տողի <<Խմբակցության գործավար>> հաստիքային միավորները տեղափոխել 20-րդ տող՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ համայնքապետարանի հաստիքացուցակում 22 անասնաբույժի հաստիքային միավորը ընդգրկել ենք <<Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ>>-ում, սակայն սահմանված կարգին համապատասխանացնելու համար անհրաժեշտ է առանձնացնել և 53-րդ տողից հետո ավելացնել <<քաղաքացիական աշխատանք իրականցնող անձնակազմ>>ենթավերնագրով:

Իսկ 54-րդ տողի <<Խմբակցության գործավար>> հաստիքային միավորը տեղափոխել <<Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ>>:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ա/

Լսեցին
«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ «ԲԱՆԱՎԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **համայնքի ավագանին որոշում է**.

1. Հիմնադրել «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի «Բանավան» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի «Բանավան» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ մանկապարտեզը շուտով կբացվի և քանի որ համայնքի ավագանին երկու ամիս գտնվելու է արձակուրդում, իսկ այդ ընթացքում, որպեսզի աշխատանքների ընթացքը հետ չընկնի և կատարվի ճիշտ ու ժամանակին՝ շահագործման հանձնելուց առաջ, բոլոր կազմակերպչական և այլ աշխատանքներն իրականացնելու, պետ. ռեգիստրում գրանցելու համար, որպեսզի շահագործման հանձնելուն պես կարողանան գործունեություն ծավալել՝ առաջարկում եմ տալ Ձեր թույլտվությունը՝ հիմնադրելու նոր ՀՈԱԿ՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի <<Բանավան>> մանկապարտեզ>> անվամբ, և երկրորդ կետով առաջարկում եմ հաստատել նշված մանկապարտեզի կանոնադրությունը:

Առաջարկություններ և առարկություններ չեղան:

22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ա/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԵԽՆԻԿԱՆ՝ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով ''Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել Վարդենիս համայնքի ղեկավարին՝

1.Համայնքային սեփականություն հանդիսացող անվավոր երկշերեփ էքսկավատոր-բեռնիչ GASE 57 OV SS 4VD 86HP մակնիշի տեխնիկան՝ համայնքի աղբահանության և բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով անհատույց և անժամկետ օգտագործման տրամադրել ''Վարդենիսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում'' ՀՈԱԿ-ին և կնքել համապատասխան պայմանագիր:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ համայնքային սեփականություն հանդիսացող անվավոր երկշերեփ էքսկավատոր-բեռնիչ CASE 57 OV SS 4VD 86HP մակնիշի տեխնիկան՝ համայնքի աղբահանության և բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով, անհրաժեշտ է անհատույց և անժամկետ օգտագործման տրամադրել ''Վարդենիսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում'' ՀՈԱԿ-ին և կնքել համապատասխան պայմանագիր: Առաջարկում եմ տալ Ձեր համաձայնությունը: Տեխնիկան ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կծառայի համայնքի ազգաբնակչությանը՝ սահմանված կարգով:

Առաջարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Քննարկել և հաստատել Վարդենիս համայնքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը նշելով, որ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի դրույթների իրագործման հիմնական գործիքը, որը հնարավորություն է տալու առավել իրատեսական, առարկայական դարձնել համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը՝ առաջիկա երեք տարվա համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրն է (ՄԺԾԾ): Այն հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն ընձեռնելով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար: Հիմք ընդունելով Վարդենիս համայնքի զարգացման 2022-2026 թվականների հնգամյա ծրագրով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, Վարդենիս համայնքի առաջնահերթությունները, 2023 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, Վարդենիս համայնքի 2025-27 թվականների ՄԺԾԾ ծրագրի զարգացման հիմնական ուղղություններում առաջնահերթ և գերակա են համարվելու հնգամյա ծրագրի տրամաբանությամբ ու սկզբնական ժամանակաշրջանի համար իրագործելի այն նոր և շարունակական ծրագրերը, որոնք միտված են լինելու համայնքի տարածքային համաչափ ու կայուն զարգացմանը,մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Առաջարկություններ և առարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

Վարդենիս համայնքի 2024թ. համար հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝.

1.Անհրաժեշտությունից ելնելով թույլատրել համայնքի ղեկավարին ,սոցիալական հատուկ արտոնություններ՝ 10,07,01 գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածից պակասեցնել 400,0 հազ.դրամ, այն ավելացնելով նույն գործառնական դասակարգման 4819 տնեսագիտական դասակարգման հոդվածին,համայնքների միությանը անդամակցելու անդամավճար վճարելու համար:

2. Վարդենիս քաղաքի <Բանավան> մակապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործարկման հետ կապված թույլատրել համայնքի ղեկավարին, նշված մանկապարտեզի գործունեությունը ապահովելու նպատակով,համայնքի վարչական բյուջեի 01.06.01./ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/գործառնական դասակարգմաՆ 4251 տնտեսագիտական դասակարգման հոդվածից պակասեցնել 13 200,0 հազար դրամ այն ավելացնելով 09.01.01 /նախադպրոցական տարրական ընդհանուր կրթություն/գործառնական դասակարգման 4239 տնտեսագիտական դասակարգման հոդվածին:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը նշելով, որ 2024 թվականի Վարդենիս համայնքի բյուջեում ՀՀ համայնքների միության անդամակցության համար բյուջեի համապատասխան տողում գումար նախատեսված չէր, այդ իսկ պատճառով վերոնշյալ ծախսը կատարելու նպատակով առաջարկեց տալ թույլտվություն՝ բյուջեում փոփոխություն կատարելու համար:

Երկրորդ կետով՝ ինչպես արդեն հայտնի է, ի ուրախություն մեզ ու մեր համայնքի, ցանկանում եմ նշել, որ Վարդենիս քաղաքի <<Բանավան>> նորակառույց մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը մոտ ժամանակներս կհանձնվի շահագործման, կգործարկվի, որի հետ կապված առաջարկում եմ տալ Ձեր թույլտվությունը՝ նշված մանկապարտեզի գործունեությունն ապահովելու նպատակով համայնքի վարչական բյուջեի 01.06.01 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ / գործառնական դասակարգման 4251 տնտեսագիտական դասակարգման հոդվածից պակասեցնել 13 միլիոն 200 հազար ՀՀ դրամ, այն ավելացնելով 09.01.01 / նախադպրոցական տարրական ընդհանուր կրթություն/ գործառնական դասակարգման 4239 տնտեսագիտական դասակարգման հոդվածին:

ՀԱրցով հանդես եկավ ավագաբու անդամ Հայկ Երանոսյանը թե արդյո՞ք ՀՀ համայնքների միության անդամակցության գումարը փոխանցվելու է միայն 2024 թվայկանի համար թե նախորդ տարիների համար ևս, որին ի պատասխան համայնքի ղեկավարը հայտնեց, որ 2024 թվականի համար և դեռ միայն առաջին մասը, մնացածը կփոխանցվի տավա վերջին, եթե հարց հառաջանա 2022 և 2023 թվականների համար կնախատեսի մյուս նիստով և կփոխանցվի ՀՀ համայնքների միությանը:

Առաջարկություններ և առաջարկություններ չեղան:
Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել՝ 2024 թվականի հունիսի 25-ին, ժամը 14:00-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը՝ բաղկացած 16 հարցից.
1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԵԽՆԻԿԱՆ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4.«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ «ԲԱՆԱՎԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ

ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2024Թ.-Ի ''ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/' ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-051-0034-0017 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.14513ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Խ.ՍՏԵՓԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 15/1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-092-0013-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 1.2ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՎԱԿԻՄ ԼԵՆՔԱՐԻ ՍԻՐԵԿԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 05-083-0106-0025 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.25ՀԱ <<ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ>>ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ <<ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ>> ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԵՖՐՈՍԻՆՅԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ LEXUS GX 470 ՄԱԿՆԻՇԻ 15TG888 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ MERCEDES-BENZ 320 E ՄԱԿՆԻՇԻ 85DA500 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՄԱԿԻՉ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԲԱՐԻՍ ՀՈՎՀԱՆԵՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի հունիսի 25-ին ժամը 14:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 22-ը, բացակայում էին <<Քաղաքացիաան պայմանագիր խմբակցության>> ավագանու անդամներ Արամ Մելքոնյանը, Արտակ Մանուկյանը, Մելանյա Եփրեմյանը, Սևակ Սիմոնյանը և <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ավագանու անդամ Վարդան Մարգարյանը: Նիստը իրավազոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը: Նիստին մասնակցում էին աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը, քաղաքաշինության հողօգտագործման և հողաշինության բաժնի պետ Աբգար Աբգարյանը, համայնքի ղեկավարի օգնական Ա. Եղիազարյանը և այլ անձինք: Համայնքի ղեկավարը ընթերցեց օրակարգը բաղկացած 16 հարցից:

Համայնքի ղեկավարը նշեց, որ <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ. <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԱԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 173-Ա

ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> հարցը ընդգրկված է եղել օրակարգում, սակայն հրատապությունից ելնելով այն արտահերթ նիստով լսվել և հաստատվել է Ձեր կողմից, և ի ուրախություն բոլորիս, քանի որ նոր ստացել ենք անվավոր երկշերեփ էքսկավատոր-բեռնիչ CASE 57 OV SS 4VD 86HP մակնիշի տեխնիկա և անհրաժեշտ է համայնքի աղբահանության և բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով անհատույց և անժամկետ օգտագործման տրամադրել ''Վարդենիսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում'' ՀՈԱԿ-ին, ուստի առաջարկում եմ վերոնշյալ հարցի փոխարեն՝ հերթականությունը պահելու նպատակով, ընդգրկել՝

<<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԵԽՆԻԿԱՆ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> հարցը:

Իսկ այժմ ընթերցում եմ օրակարգում ընդգրկված հարցերը՝ ըստ հերթականության:

Այնուհետև օրակարգը հաստատելու մասին հարցը դրվեց քվեարկության:

22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱՋՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԽՉԵՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կամո Զարոյանը _____